



ԱՆՎԵՐՂԻ ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆ  
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
PUBLIC ENVIRONMENTAL INFORMATION CENTRE OF ALAVERDI

ԳԳ Լոռու մարզ, ք. Ալավերդի,  
Ձորավար Անդրանիկի 8/1, 403 սենյակ  
Նոն (+374) 25324114, 91199324  
Էլ. փոստ info\_alaverdi@asartus.am  
anushkevovyan@rambler.ru

Lori, Alaverdi,  
Zoravar Andranik str. 8/1, 403  
Tel. (+374) 25324114, 91199324,  
E-mail info\_alaverdi@asartus.am  
anushkevovyan@rambler.ru

«Վալլերս» խմբի ընկերությունների փոխնախագահ,  
«ԷՅ-ՍԻ-ՓԻ» ՓԲԸ տնօրեն  
Պարոն Գ. Արզումանյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Արզումանյան.

Արդեն մի քանի օր շարունակ Ալավերդիում «ACP» ընկերության գործունեության արդյունքում արտանետվող ծխազագերը դուրս են գալիս հին ծխատար խողովակից, ինչի հետևանքով քաղաքն անընդմեջ ծածկվում է ծխի ամպերով:

Ալավերդի քաղաքի վրա կախված ծխազազը առաջացրել է բնակչության անհանգստությունը եւ Օրհուս կենտրոնը ստացել է բազմաթիվ ահազանգեր:

Ինչդրում եմ Ձեր պարզաբանումը նշված երեւույթի վերաբերյալ:

Կանխավ շնորհակալություն:

Ալավերդու Օրհուս կենտրոնի համակարգող

Անուշ Էվոյան

03.06.2015թ.